ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱՐՔԵՐԸ ՀԱՄԱԼՐԵՑ 50 ՓԱՍՏԱԲԱՆ

03.12.2016 16:49

ՀՀ փաստաբանական դպրոցի 50 շրջանավարտ դեկտեմբերի 3-ին ստացել է փաստաբանի գործունեության արտոնագիր:

«Հանդիսավոր երդվում եմ ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահորդների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով»,- Պալատի խորհրդի առջև այսպես հանդիսավոր երդում են տվել ապագա փաստաբանները:

Երդմանը հաջորդել է խորհրդի կողմից հավակնորդների դիմումների միաձայն բավարարումը և արտոնագրերի տրամադրումը:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, ողջունելով ներկաներին, նշել է որ այսօրվանից նրանց արդեն դե յուրե կարող են դիմել որպես փաստաբան-գործընկերների. «Այն, ինչ հաջողվել է փաստաբանների բոլոր սերունդներին և ամրագրվել է որպես համայնքի ձեռքբերում, այսօրվանից նաև ձեզ է պատկանում: Զարգացրեք համայնքի բարի ավանդույթները և պայքարեք մեր համայնքում տեղ գտած բացասական երևույթների դեմ: Այսօր կարելի է բարձրաձայն արձանագրել նաև, որ Փաստաբանական դպրոցով անցած փաստաբանները լավ են գիտակցում կոռուպցիայի դեմ համայնքային և անհատական պայքարի դերն ու նշանակությունը»: Արա Զոհրաբյանը շնորհակալություն է հայտնել Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանին և աշխատակազմին, փաստաբանական դպրոցի խորհրդի անդամներին՝ Նիկոլայ Հակոբյանին, Լեոնիկ Հովհաննիսյանին, Հերիքնազ Տիգրանյանին, Լյուդվիկ Դավթյանին, Արտակ Ասատրյանին, փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի անդամներին՝ Սեդրակ Ասատրյանին, Հունան Տեր-Վարդանյանին, Քրիստինա Սարդարյանին, Մանե Կարապետյանին, Գառնիկ Սաֆարյանին և Ելիզավետա Դանիելյանին, փաստաբանների պալատի աշխատակազմին, որոնց ջանքերով կազմակարպվել և անց են կացվել ուսումնառությունը և որակավորման քննությունները: Նա նաև հատուկ շնորհակալություն է հայտնել ՀՀ փաստաբանական դպրոցի դասախոսական կազմին:

Պալատի նախագահը ապագա փաստաբաններին մաղթել է բարի երթ և հաջողություն հետագա ձեռնարկումներում:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը, շնորհավորելով շրջանավարտներին, նշել է, որ Դպրոցն իր մասնագիտական պատրաստվածությամբ չի զիջում աշխարհում գործող համանման դպրոցներին. «Մեր դպրոցում պետք է կատարելագործվի պրակտիկ ուսուցումը: Մենք գնում ենք առաջ ու ստանում ենք այն արդյունքը, որն այսօր ունենք: Հույս ունենք, որ մենք՝ արդեն որպես գործընկերներ, առիթ կունենանք համագործակցելու»,-եզրափակել է նա:

Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանը շնորհավորական խոսքում կարևորել է փաստաբանի կայացման և մրցակցության մեջ դիմագրավելու անհրաժեշտությունը: Նա նշել է, որ վստահությունը փաստաբանի հանդեպ ձեռք է բերվում նրա աշխատանքի և տարիների փորձի արդյունքում:

Շնորհակալական խոսքով հանդես են եկել շրջանավարտներ Էդգար Հակոբյանը, Մարինե Միրիջանյանը և Նշան Մաթևոսյանը: Անդրադառնալով Դպրոցից ստացած գիտելիքների կարևորությանը և փաստաբան դառնալու վաղեմի ցանկությանը՝ երիտասարդները շեշտել են հատկապես պրակտիկ աշխատանքի դերը, ինչը Դպրոցը ընձեռել է ուսումնառության ընթացքում: Նշան Մաթևոսյանն ընդգծել է. «Փաստաբան ասելիս պետք է պատկերացնել խելացի, բազմակողմանի զարգացած, հզոր տրամաբանություն և վերլուծական ուժեղ հմտություններ ունեցող անձնավորության, ով հարգում է արդարությունը, շահերի պաշտպանության հավասար պայմանները, տիրապետում է սահուն և հռետորական մտքեր արտահայտելուն, գործում է Սահմանադրությամբ և օրենքներով և շահագրգռված է իր վստահորդի իրավունքները բարձր մակարդակի

պաշտպանությամբ»:

Հիշեցնենք, որ արտոնագրեր ստացել են փաստաբանի այն հավակնորդները, ովքեր հաղթահարել են որակավորման քննությունների նվազագույն շեմը:

Հայաստանի Հանրապետությունում այսօր գործունեություն է իրականացնում 1730 փաստաբան:



բիզնես կենտրոն



ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
EREBUNI
PLAZA

Erebuni Plaza
business center



ԵՐԵԲՈՒՆԻ
PLAZA

ԵՐԵԲՈՒՆԻ
PLAZA



ԵՐԵՎԱՆ



Երեւանի Պլազա
բիզնես կենտրոն

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })